

Փուլեր և Հովհան

Ն. Ա. ՆԵԿՐԱՍՈՎԸ ԵՎ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՆ

Նիկոլայ Ալեքսեևիչ Նեկրասովի հանդես գալը ռուս գրականության մեջ պայմանավորված էր Ռուսաստանի հասարակական կյանքում տեղի ունեցած նոր իրադարձություններով։ Այդ իրադարձությունների ամենաբնորոշ կողմնային էր, որ Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժումները թևակոխել էին զարգացման մի նոր շրջան և, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, ավելի քան լայն էր մարտիկների շրջանը, ավելի էր մոտեցել նրանց կապը ժողովրդի հետ։

Նեկրասովն ապրել ու գործել է XIX դարի Ռուսաստանի լավագույն մարդկանց, իր ժամանակի առաջավոր, ռևոլյուցիոն-դեմոկրատների փայլուն պլեյադայի հետ։ Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը Նեկրասովի մարտական ու լավագույն բարեկամներն էին։ Նրանց գաղափարներով ոգեշնչված, նրանց գործոն ազդեցությամբ Նեկրասովը ռուս պոեզիայի մեջ հիմք դրեց մի նոր ուղղության, դարձավ ռուս մեծ ժողովրդի վշտի, ցասման ու բողոքի անմահ երգիչը։

Նեկրասովի պոեզիայի ուժը, հմայքը, վեհությունը նրա ժողովրդայնության մեջ է։ Իրավագույն, ճշված ռուս ժողովրդին առաջին անգամ բազմակողմանի ու լայն կերպով պատկերված ենք տեսնում Նեկրասովի պոեզիայում։ Պոետական մեծ շնչով, ռեալիստական ճշմարտացիությամբ Նեկրասովը երգել է ռուս աշխատավոր գյուղացու խինդն ու զայրույթը, նրա խոհերն ու երազանքները։ Նեկրասովի պոեզիան անսահման սեր է առաջացնում ժողովրդի հանդեպ և անլուսապ ատելություն նրա թշնամիների նկատմամբ։ Պատահական չէ, որ նրա ամեն մի նոր բանաստեղծությունը իր վրա էր բեռնել Ռուսաստանի առաջավոր մարդկանց ուշադրությունը և զենք ծառայել ռևոլյուցիոն այն ընդհանուր պայքարում, որ մղվում էր ինքնակալության և ճորտատիրական կարգերի դեմ։

* * *

XIX դարի երկրորդ կեսի հայ պոեզիան խորապես կրել է Նեկրասովի բարերար ազդեցությունը։ Հայ պոետների համար խիստ հարազատ են հնչել Նեկրասովի պոեզիայի քաղաքացիական մոտիվները, ռուս ժողովրդի վիշտն ու ցասումն արտահայտող խորունկ երգերը, ճշված ու իրավագույն ռուս գյուղացու դառը կյանքի բազմակողմանի ու խոր պատկերումը։ Հայ գրականության մեջ մեծ արձագանք են գտել հատկապես Նեկրասովի պոեզիայի հայրենասիրական մոտիվները։

Հայ իրականության մեջ առաջին մեծ պոետը, որն արձագանքել է Նեկրասովի պոեզիային, Միքայել Նալբանդյանն էր, ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների մարտական այդ զինակիցն ու գործակիցը։ Ինչպես գրական քննադատության, փիլիսոփայության, պատմության, հրապարակախոսության, այն-

պես էլ պոեզիայի հարցերում նախնադրանք հետևել է ողու ուղղություն դեմոկրատների՝ Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի մարտական տրագիցիաներին:

Նախ իր ծննդավայր Նախիջևանում, ապա նաև Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին, Նախնադրանք հիմնովին ծանոթանում է ողուական գրականությանը: Նրա սիրելի գրողներն էին Պուշկինը, Լերմոնտովը, Դոբուշին, Բելինսկին, Չերնիշևսկին, Տուրգենևը, Գերցենը, Դոբրոլյուբովը, Օգարևը, Նեկրասովը և ուրիշները: Իր աշխատություններում Նախնադրանք ոգեշնչված խոսում է նրանց մասին, մեջբերումներ կատարում նրանց երկերից, իսկ մի քանիսի հետ մտերմական հարաբերության մեջ էր: Նախնադրանք առաջին նշանավոր հայ բանաստեղծն էր, որ հաջողությամբ թարգմանեց Պուշկինի և Լերմոնտովի բանաստեղծությունները. նրա խորհրդով ու հանձնարարությամբ ողու հանձարեղ բանաստեղծների մի շարք երկեր 50—60-ական թվականներին թարգմանվել ու տպագրվել են հայերեն:

Նեկրասովի «Սովրեմեննիկ»-ում տպագրվող գրական-քննադատական, պատմա-փիլիսոփայական աշխատություններին Նախնադրանք ոչ միայն քաջ ծանոթ էր, այլև առանձին երկեր նա թարգմանել է հայերեն ու տպագրել «Հյուսիսափայլ»-ի էջերում: Տարբեր հոդվածներից բացի Նախնադրանք «Սովրեմեննիկ» ամսագրից թարգմանել է Բերանժեի ու Հայնեի բանաստեղծությունները:

Առանձին ոգևորությամբ Նախնադրանք հետևել է Նեկրասովի ստեղծագործություններին: Նեկրասովի պոեզիայի քաղաքացիական մոտիվները ոգեշնչել են Նախնադրանքին՝ երգելու իր ժողովրդի վիշտն ու ցասումը: Փայլուն կերպով ըմբռնելով պոեզիայի քաղաքական ու հասարակական դերը և ամբողջովին համակված Նեկրասովի «Մուսա», «Պոետն ու քաղաքացին» և այլ բանաստեղծությունների իդեական բովանդակությամբ, Նախնադրանք գրում է.

Հո տ կաց, դու քնար, այլ մի՛ հնչիր ինձ,
Ու պոետն, հե՛տ առ դարձյալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ բնդունակ է
Ձե՛հ բերել կյանքը սիրած աղջկան:

Սա պիտի դուրս գամ դեպի հրապարակ
Առանց քնարի, անզարդ խոսքերով.
Սա պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմներով:

Ներկա օրերում այլ ի՛նչ սե քնար,
Սուր է հարկավոր կտրիչի ձեռքին.
Արյո՛ւն ու կրա՛կ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին:

Ոչ միայն այս, այլև իր պոետական մյուս ստեղծագործություններում Նախնադրանք կրել է ողու պոետների, հատկապես Նեկրասովի ազդեցությունը, արտահայտել է նրա ուղղություն շունչն ու ոգին:

Իր դրական գործունեությունը սկսելով որպես բանաստեղծ Նախնադրանք մինչև իր կյանքի վերջը փայլուն կերպով օգտագործեց դրական այդ ժանրը, որպես իր ուղղություն պայքարի կարևորագույն զենքերից մեկը: «Հյուսիսափայլ»-ի էջերում տպագրած նրա հայրենասիրական ու ազատասիրական բանաստեղծություններն ամբողջովին ներշնչված են ուղղություն-դեմոկրատ-

ների մարտական ոգով, այդ բանաստեղծությունները հսկայական ազդեցություն են ունեցել ընթերցողների լայն շրջանների վրա, իշխել են երիտասարդության մտքին, ոգեշնչել նրան սլաշքարի։ Այդ տեսակետից հատկապես պիտի նշել նրա «Ազատություն» բանաստեղծությունը, մի բանաստեղծություն, որն իր ունիվերսալ բովանդակությամբ անցյալ դարի 50—60-ական թվականների ունիվերսալ պոեզիայի գոհարներից մեկն է։ Բանաստեղծը նշում է, որ դեռևս «անբարբառ մի մանուկ» մանկական օրորոցում «ուխտում է ազատություն սիրել»։ Մեծանալով նա տեսնում է, որ ազատության հանապարհը փրշոտ է, բայց ոչինչ նրան չի սասանում և ամբողջ ձայնով դառնում է նա ազատության թշնամիներին։

— Ազատություն,— գոչեցի,—
Թող որոտա իմ գլխին,
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան
Մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար. ազատություն։

Ազատության մեծ ու անմահ երգչի ունիվերսալ աշխատանքը լայն հանապարհ հարթեց հայ դեմոկրատական-ունիվերսալ պոեզիայի հետագա զարգացման համար։

* * *

Ռուս ունիվերսալ-դեմոկրատների, հատկապես Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի ստեղծագործությունների նկատմամբ ակտիվ հետաքրքրություն է հանդես բերել 60-ական թվականների հայ անվանի բանաստեղծ Սմբատ Շահազիզը։ Շահազիզն իր դրական գործունեությունն սկսել է «Հյուսիսափայլ»-ի էջերում, որի իշխող ոգին է եղել Միքայել Նալբանդյանը։ Նա Նալբանդյանի ջերմ երկրպագուներից էր և նրա ազդեցությունն ակնհայտ է Շահազիզի ստեղծագործությունների վրա։

Երկար տարիներ շարունակ ապրելով Մոսկվայում, կատարելապես տիրապետելով ռուս լեզվին, շփվելով ռուս գրական առաջավոր շրջանների հետ, Շահազիզը որոշակիորեն կրել է ռուս 60-ականների բարերար ազդեցությունը և իր ստեղծագործություններում յուրովի արձագանքել է նրանց գաղափարներին։

Նալբանդյանից հետո Շահազիզը երկրորդ անվանի հեղինակն է հայ իրականության մեջ, որն իր ստեղծագործություններում մեջբերումներ է արել Չերնիշևսկու երկերից, հրապուրվել է Դոբրոլյուբովի ու Նեկրասովի պոեզիայով և նույնիսկ թարգմանել այդ հեղինակներից որոշ բանաստեղծական տողեր։ Շահազիզը պատկանել է 60-ական թվականների հայ երիտասարդության այն թևին, որ եռանդուն կերպով հետևել է Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի «Սովրեմեննիկ»-ին և նրա մեջ արծարծվող գրական, քաղաքական ու հասարակական հրատապ հարցերին։ Իր նամակներից մեկում Շահազիզն այդ մասին գրել է. «Ավելորդ է ասել, որ ինձ վրա, ինչպես և իմ ամբողջ սերունդի վրա ուժեղ ազդեցություն է գործել ռեֆորմների դարաշրջանը և նրա արտադրումը ռուս մտավոր կյանքում... Ընկերական շրջանում ես պատկանում էի

այն երիտասարդների թվին, որոնք ամենից ավելի եռանդով հետևում էին ուսական ժողովներին, օրինակ «Սովորեմենիկին» և նրա մեջ արժարժվող հարցերին... 1859 թվականի «Սովորեմենիկ»-ից է առնված «Լեվոնի վշտի» երգերից մեկի էպիգրաֆը: Կարդալով Դոբրոլյուբովի «Милый друг, я умираю» բանաստեղծությունը, իմ մոտ միտք հղացավ գրելու սեփական մի բանաստեղծություն, որը ինձ մոտ սկսվում է գրեթե նույն բառերով, բայց հետո արդեն այլ բնույթ է կրում և անմիջապես վերաբերում է հայերի վիճակին»¹:

Ուշագրավ է այս խոստովանությունը: Դա վկայում է այն մասին, որ Նալբանդյանը մենակ չէր, որ նրա հետ միասին և նրա գլխավորությամբ հայ երիտասարդության մի ամբողջ սերունդ եռանդուն կերպով հետևել, ոգեշնչվել է ուս ուսուցիչին-դեմոկրատների օրգան «Սովորեմենիկ»-ով, այնտեղ տպագրվող Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի մարտական հոգվածներով, գեղարվեստական հանճարեղ երկերով:

Ինչպես հայտնի է, թե՛ «Սովորեմենիկ»-ի և թե՛ առհասարակ այդ շրջանի ամենամեծ բանաստեղծը Նեկրասովն էր և հենց նրա ազդեցությամբ, նրա անմահ երկերով ոգեշնչված, սկսեց իր պոետական գործունեությունը Սմբատ Մահադիդը: Իր պոետական դավանանքը, իր ըմբռնումը պոեզիայի հասարակական դերի ու նշանակության մասին, Նեկրասովը փայլուն կերպով արտահայտել է իր «Պոետն ու քաղաքացին» բանաստեղծության մեջ.

Будь гражданин! Служа искусству,
Для блага ближнего живи,
Своей гений подчиняя чувству
Всеобнимающей любви..

Поэтом можешь ты не быть,
Но гражданином быть обязан.
А что такое гражданин?
Отечества достойный сын!..—

(Քաղաքացի լինի քո արվեստի հետ
Լկարիք մերձավոր ընկերոջ համար,
Նվ քո հանճարը ենթարկիր հավետ
Համայնապարփակ սիրո զգացման...)

Պոետ կարող ես դու և չլինել,
Բայց քաղաքացի՝ պարտավոր ես միշտ,
Իսկ քաղաքացին ի՞նչ բան է, իրավ.
Դա հայրենիքի զավակն է սիրած...)

Մեծ բանաստեղծի այս տողերը մի ամբողջ մանիֆեստ էր 50—60-ական թվականների պոեզիայի համար: Դա ուսուցիչին-դեմոկրատական պոեզիայի նոր ուղին էր, որ նշեց Նեկրասովը: Ամբողջովին ժխտելով ումանտիկական, ուսուցիչին ու վերացական պոեզիան, Նեկրասովը առաջադրում է ուսուցիչին-դեմոկրատական պոեզիայի իր ծրագիրը: 60-ական թվականների իր ստեղծագործություններում Շահադիդը որոշակիորեն արձագանքեց Նեկրասովին, աշ-

¹ Ю. Веселовский, Русское влияние в современной армянск. литературе, Москва, 1909, стр. 14—15.

² Н. А. Некрасов, Полное собрание сочинений, том II, Москва, 1948, стр. 12.

խատեց դառնալ Նրա քաղաքացիական պոեզիայի արտահայտիչը հայ գրականության մեջ: Ճիշտ է աշխարհայացքի սահմանափակությունը, ժամանակի հասարակական-քաղաքական պայքարի մեծ իրադարձություններից կտրված լինելը խանգարել են Շահազիզին հասնելու Նեկրասովի պոեզիայի ունույն-ցիոն, մարտնչող ոգու բարձրությանը, բայց Նեկրասովի ազդեցության այն յուրովի արտահայտությունները, որոնք կան Շահազիզի պոեզիայում, ուշադրավ են ու հետաքրքիր: «Բռնավոր սուլթանը» բանաստեղծության մեջ Շահազիզը համարյա նույնությամբ կրկնում է Նեկրասովի «Պոետն ու քաղաքացին» բանաստեղծության վերոհիշյալ տողերի միտքը.

Եվ այժմ պոետն այլ երազում չէ,
Որ նա որդին էր վերին երկնի.
Եվ նորա հոգին պիտո է լո՛ւն,
Ուր բան էր վատթար խեղճության ազգի.
Եվ թե ծնել էր, որ լինի թարգման
Քառսը մեղկությամբ և անգործությամբ,
Եվ ոգևորված, քնարի հետ խոսեր,
Երբ նա երգում էր միայն զինի և սեր,—
Ո՛չ նա փոխել էր այդ ծուռ գաղափար,
Նա բաժանորդ է ազգի ցամի հետ,
Եվ ահա այս խոսքս թնդում է քնար.
Նախ՝ ֆաղաֆացի, և ապա՝ պոետ:

«Նախ՝ քաղաքացի, և ապա՝ պոետ» տողերն ուղեցույց են եղել Շահազիզ բանաստեղծի համար: Այդ մասին է վկայում նրա «Լեվոնի վիշտը» բանաստեղծությունների ժողովածուն: Բր մի այլ բանաստեղծության մեջ, որ կրում է «Պոետ, նյութապաշտ և քաղաքացի» բնորոշ վերնագիրը, Շահազիզը նորից արձագանքելով Նեկրասովյան «Պոետը և քաղաքացին» նշանավոր բանաստեղծության մեջ արժարժված ծրագրային գաղափարներին, գրում է.

Ե՛կ, Պոետ, քաղաք, այնտեղ գո՛րծ գործիր,
Հասարակի բաղն ու օգուտն երգի՛ր.
Դու այն ժամանակ անդամ ես ազգի,
Եվ արժանի ես մեր սուրբ հարգանքի:—
Այս քաղաքացին ասաց պոետին,
Շտա պ քայլերով գնաց յուր գործին:

Նեկրասովի ազդեցության հետքերը պարզ կերպով կարելի է նկատել Շահազիզի նաև այլ բանաստեղծություններում, ինչպես և նրա նշանավոր «Լեվոնի վիշտը» պոեմում: «Լեվոնի վիշտը» լույս տեսավ 60-ական թվականներին, երբ մոլեգնում էր ռեակցիան: Այդ պոեմի նախերգանքում Շահազիզը գրում է, որ իր «մոռածության նյութը» «հասարակական ծանր պիտոյքն» է: Անդրադառնալով տիրող կարգերի դեմ բարձրացած մասսայական դժգոհություններին, ընդվզումներին, Շահազիզը կոչ է անում իր ժողովրդին, նրա առաջավոր, լավագույն զավակներին.

Թո՛ղ քաղաքական մեծամեծ գործեր
Այսօր շանցանեն ձեզ համար ունայն...

Պատահական չէ, որ Շահագիւղի «Լեւոնի վիշտը» բանաստեղծութիւնները ժողովածուի դեմ ըմբոստացան ժամանակի ունակները, լրտեսագրեր գրվեցին նրա մասին, պահանջվեցին արգելել այդ ժողովածուն, որպէս Նալբանդյանի գաղափարների ոգով գրված գիրք:

Ռուս 60-ականների և հատկապէս ներկայացրած պահանջները գրողին, որպէս հասարակութեան գիտակից ու գործոն անդամի, 'անշուշտ, հարազատ էին Շահագիւղին և նա իր հերթին նույնպիսի պահանջներ է ներկայացնում հայ գրողին, հայ հրապարակախօսին: Երիտասարդ գրականագետներից մեկին ուղղած իր մի նամակում, Շահագիւղը գրում է. «Ռուս, որպէս բժիշկ, պիտի դիտես հասարակութիւնը, դորա հետ գնալով, միայն ոչ ետեից, այլ առաջից. մի ձեռիդ ժամացույց, մյուսի մեջ նորա ձեռը ձիշտ պիտի համբուս երակի շարժերը, տեղեկանալով հիվանդութեան պատճառին և հավասար դեղ ու դարման անելով: Եթե մարմնի մեջ վարակիչ ցավ է նկատվում և օպերացիայի անհրաժեշտութիւնը կա, ականջ մի դիր հիվանդի վային. առ դանակդ, կտրիր փթած տեղը դէն ձգիր, որպէսզի բոլոր մարմինը չկորչի»:

Շարունակելով ու էլ ավելի խորացնելով իր միտքը գրողի հասարակական դերի մասին, Շահագիւղը նշում է, որ գրողը անդադար պիտի մաքառէ հասարակական խոցերի, այլանդակութիւնների, թերութիւնների դեմ և այդ նա պիտի անի թե՛ դրչով և թե՛ գործով: «Հասարակութեան անկեղծ բարեկամը,— շարունակում է Շահագիւղը,— այդպիսի դեպքերում չպիտի խնայէ և ոչ մի միջոց, մինչև անգամ, եթե պահանջում է հանգստմանքը, և զինվորի պէս, սուրը ձեռին, ընկնել կովի դաշտում»:

Շահագիւղի այս տողերը մեզ համար արժեքավոր են հատկապէս այն իմաստով, որ նա հայ գրողների ուշադրութիւնը հրավիրում է դեպի իրական կյանքը, դեպի ժամանակի հասարակական հուզող հարցերը: Դա որոշակի կոչ էր հետևել Նալբանդյանի օրինակին, նրա պէս կովել և նրա պէս ընկնել կովի դաշտում: Իր պոեզիայում ևս Շահագիւղը պայքարի կոչ է անում հին աշխարհի նահապետական բարքերի ու սովորութիւնների, ֆեոդալական ծանր պայմանների դեմ: Նա գրել է.

Ո՛վ ազատութիւն, սուրբ արարական,
Զոհելու եմ քեզ իմ անձս հավիտյան:
Թո՛ղ ստրկացած դարերով մարդիկ,
Գնեն իմ վերա նզովքի կնիք:
Թո՛ղ սրէ շար լեզուն անզոր թշնամին,
Բափելով վերաս թունավոր սլաքներ.
Նս պիտի խնդրեմ, ա՛զգ իմ լալադին,
Ոտնակոխ եղած քո իրավունքներ:
Ոչ որ չէ՛ կարող հոգուս նպատակ
Ծնել, խորտակել բոնութեան զենքով.
Ոչ սո՛ւր, ոչ արյո՛ւն, ոչ բա՛նտ, ոչ կայծա՛կ,
Ոչ նո՛ւյնիսկ դեհն մշտաւառ բոցով:

Շահագիւղը դեմ էր, այսպէս կոչված, «մաքուր» արվեստի տեսութեան: Իր ստեղծագործութիւններում Շահագիւղն ամենուրեք պնդել է, որ գեղարվեստը պետք է ծառայի հասարակական կարիքներին, որ նրա համար է ստեղծված նա և նրանից դուրս չկա և չի կարող լինել իսկական գեղարվեստ, իսկական գրականութիւն:

Ռեակցիայի կատաղի հարձակումները 60-ական թվականների ռևոլյուցիոն-դեմոկրատների վրա, նրանց բանտարկումն ու աքսորը, ինչպես շատ դեմոկրատ գրողների, Շահազիզին նույնպես վախեցրել և նա հետզհետե թեքվում է դեմոկրատական դիրքերից դեպի լիբերալիզմը, միայն առանձին դեպքերում դարձյալ հիշեցնելով 60-ական թվականների վերելքի տարիները:

Շահազիզը հայ գրականության պատմության մեջ մնացել է որպես 60-ական թվականների հայրենասեր բանաստեղծ և որպես այդպիսին նա իր որոշակի ազդեցությունն է ունեցել հայ բանաստեղծների հետագա սերունդի վրա: Իզուր չէ, որ Շահազիզի հիշատակին նվիրած իր բանաստեղծության մեջ սլոեստ Հովհաննես Հովհաննիսյանը գրել է.

Դու ներշնչեցիր մեզ մի հույս գողտրիկ,
Թե մեր փրկության օրն էլ շուտ կըգա
Անկեղծ սիրեցիր գու քո հայրենիք,
Նա, ազնիվ երգիչ, քեզ չի մոռանա Ն:

* * *

1850 թվականի վերջերին և 1860 թվականի սկզբներին ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններով, «Հյուսիսափայլ»-ի էջերում, հանդես է եկել Գևորգ Բարխուդարյանը: Լիրիկական բանաստեղծությունների կողքին Բարխուդարյանը թողել է նաև բազմաթիվ թարգմանություններ եվրոպական և ռուս բանաստեղծների ստեղծագործություններից: Բարխուդարյանն առաջին հայ բանաստեղծներից է, որ 60—70-ական թվականներին թարգմանել է հունգարական ռևոլյուցիոն բանաստեղծ Շանդոր Պետեֆիի մի շարք բանաստեղծությունները: Բարխուդարյանի թարգմանությամբ «Հյուսիսափայլ»-ի էջերում տպագրվել է Պուշկինի լիրիկական երգերը: Նա հաջող կերպով թարգմանել է նաև Լերմոնտովի մի շարք բանաստեղծությունները, այդ թվում նաև նրա հայտնի «Երեք արմավենի», «Վեճը», «Դարեալի կիրճը» և այլն:

Լինելով «Հյուսիսափայլ»-ի աշխատակիցն ու ջերմ պաշտպանը, Բարխուդարյանը միաժամանակ եռանդուն կերպով հետևել է «Սովրեմեննիկ» ժուռնալին և նրա խմբագիր Նեկրասովի ստեղծագործություններին: 1878 թվականի սկզբներին Բարխուդարյանը «Փորձ» ամսագրում տպագրում է «...-ցի հիշատակին» մի բանաստեղծություն: Այդ բանաստեղծության վերնագրի տակ փակագծում դրված էր «Նմանություն Նեկրասովին»: Դժվար չէ կռահել, որ այդ բանաստեղծությունը Նեկրասովի «Դոբրոլյուբովի հիշատակին» վերնագիրը կրող բանաստեղծության վերափոխությունն է: Հեղինակը պահպանել է Նեկրասովի բանաստեղծության ընդհանուր ոգին, արտահայտչական որոշ ձևերը, կրկնել նույնիսկ լուսանձին տողեր: Նրկու տասնյակ տարի հետո հրապարակելով իր «Բանաստեղծությունների» ժողովածուն և զետեղելով այնտեղ այդ բանաստեղծությունը, Բարխուդարյանը այս անգամ վերնագրում է այն «Մ. Ն...-ցի հիշատակին», այսինքն՝ «Միքայել Նալբանդյանցի հիշատակին»: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Բարխուդարյանն իր այդ բանաստեղծությունը նվիրել է Նալբանդյանին: Ռուսական մամուլը 70-ական թվականներին արդեն հիշել էր, որ Նալբանդյանը դա հայկական Դոբրոլյուբովն է: Եվ, հետևելով Նեկրասովի «Դոբրոլյուբովի հիշատակին» բանաստեղծության օրինակին, Բար-

¹ Հ. Հովհաննիսյան, Բանաստեղծություններ. Վաղարշապատ, 1908, էջ 72:

խուղարյանը, կարծես, մի անգամ ևս սիմվոլիկ կերպով ընդգծել է Դոբրոլյուբովի և Նալբանդյանի գաղափարական հարազատությունը:

70-ական թվականների հայ պոեզիայի վրա ունեցած նեկրասովի ազդեցության ցայտուն արտահայտություններից մեկն է Բարխուդարյանի «Մ. Ն...-ցի հիշատակին» բանաստեղծությունը և ահա թե ինչու մենք անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այն.

«Մ. Ն. ...ՑԻ ԶԻՇԱՏԱԿԻՆ
(Նմանություն նեկրասովին)

Մահկանացու աշխարհ եկար,
Բայց երբ մեռար — անմահացար:
Քո հիշատակը թանկագին,
Անշինջ և սուրբ է մեզ համար,
Քեզ պեսներին կարոտագին
Վաղուց սպասում էր հայ աշխարհ:
Բոլոր կյանքդ նվիրեցիր
Նղբայրներիդ բարօրության,
Վստահաբար մաքառեցիր
Խավարի դեմ տգիտության.
Իբրև լույս աստղ երև
Հորիզոնի վրա հայության,
Ավետելով օրը պայծառ
Հայոց ազգի վերածնության:
Սփսոս, որ քեզ չէր վիճակված,
Տեսնել քո իղձը կատարված:
Անդուծ մահը անժամանակ
Հափշտակեց քեզ մեզանից,
Մինչև սուրբ դործին տալ հաղթանակ
Սպասում էինք մենք քեզանից:
Մայր հայրենիք, ողբա՛ և լա՛,
Որ նորա պես ողորկ կորցրիք.
Բայց սիրտդ թող հպարտանա,
Որ նրա պեսին աշխարհ բերիր.
Որովհետև օտառ մարդիկ
Կարծում էին, թե հայ մայրեր
Ընկունակ չեն ծնել որդիք,
Ազգի համար անձնանվեր:

Նեկրասովի սատիրական նշանավոր բանաստեղծությունների նմանությամբ Բարխուդարյանը փորձել է գրել մի շարք բանաստեղծություններ Դրանց մեջ համեմատաբար հաջող կարելի է համարել «Բարեսիրտ մարդը» վերնագիրը կրող բանաստեղծությունը, որն ամբողջովին ներշնչված է Նեկրասովի «Բարոյական մարդը» և սատիրական մյուս բանաստեղծությունների ոգով:

Իս քնում եմ տաք անկողնում,
Նրբեք ցրտից չեմ կոնկուռնում,
Փորս կուշտ է, սիրտս ուրախ,
Նրբեք քաշում չեմ ախ ու վախ:

1 «Փորձ», Բ. տարի, № 3, 1877—78:

2 «Լույս», 1902, № 1:

Տունս պատրաստ գեղեցկաշեն,
Կահ կարասիքս թանկ արժեն,
Էվ ամեն օր խնջույք, երգ, պար
Ձեն պակասում տանս իսպառ:

Բայց յան, որոնք շունին տաք շոր,
Ման են գալիս բոբիկ, տկուր-
Չոր հացին էլ կարոտ են միշտ,
Նոցա կյանքն է անընդհատ վիշտ:

Բայց ո՞ր մեկին հաց տամ, օգնեմ.
Անշափ շատ են, ես կը հոգնեմ:—
Շատ մտածել զուր է, շարժե.
Նոցա հոգսն էլ աստված քաշե՛:

* * *

Հայ կլասիկ պոեզիայի մեջ, որպես քաղաքացի-պոետ մեծ անուն է վաստակել Ռափայել Պատկանյանը: Իր գրական գործունեությունը սկսելով անցյալ դարի 50-ական թվականներին, նա 70—80-ական թվականներին դառնում է հայ պոեզիայի կենտրոնական դեմքը: Պատկանյանը հայտնի է որպես հայ ժողովրդի ազդային-ազատագրական պայքարի մարտնչող երգիչը, օտարերկրյա և հատկապես թյուրքական վայրենի բարբարոսությունների դեմ ծառացող քաղաքացի-բանաստեղծը: Նրա մի շարք բանաստեղծությունները դարձել են մարտական երգեր՝ իր անկախության համար պայքարող ժողովրդի բերանում: Նա միաժամանակ սատիրական սուր բանաստեղծություններով ոչնչացնող քննադատության է ենթարկել հայ հարուստներին, վաճառականներին, կեղծ հայրենասերներին: Պոետական մեծ շնչի տեր բանաստեղծ էր Ռափայել Պատկանյանը և որպես այդպիսին 70—80-ական թվականներին նրա պոետական ձայնը լայն արձագանք է գտնում ոչ միայն Հայաստանում, այլև հայաբնակ ամենահեռավոր վայրերում:

Ռափայել Պատկանյանն իր ամբողջ կյանքն անց է կացրել Ռուսաստանում: 50-ական թվականներին նա սովորել է Մոսկվայում, ապա տեղափոխվել Պետերբուրգ և 1860 թվականին ավարտել Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժինը: Նա կատարելապես տիրապետում էր ռուս լեզվին և հիմնովին ուսումնասիրում ռուս հարուստ դրականությունը: Պատկանյանը թողել է մի շարք արժեքավոր թարգմանություններ, որոնց մեջ հատկապես աչքի են ընկնում Պուշկինի «Ոսկե ձկնիկ»-ի, Լերմոնտովի «Երեք արմավենի»-ի և պոետական մի քանի այլ թարգմանություններ:

Հայ գրական քննադատությունը վաղուց Պատկանյանի անունը կապել է Նեկրասովի անվան հետ, նշել ստեղծագործական այն ներշնչումները, որ ստացել է նա Նեկրասովի պոեզիայից: Պատկանյանը չի ժխտել ռուս պոեզիայի ազդեցությունն իր և մյուս հայ գրողների ստեղծագործությունների վրա: 1884 թվականին Փիլիպոս Վարդանյանին ուղղած նամակում խոսելով երկու ժողովուրդների կուլտուրական փոխադարձ համագործակցության մասին, Պատկանյանը գրում է. «Մեր բնությունն ավելի մոտ լինելով նոցա (ռուսներին) և մենք անխզելի կապեր ունենալով նոցա հետ, մեր ազգովին յուսավորվելու միջոցները պիտի որոնենք նոցա մեջ»:

¹ «Լուսա», 1902, № 1:

50—60-ական թվականներին ապրելով Մոսկվայում և Պետերբուրգում, Պատկանյանը հետևել է ժամանակի գրական մամուլին, մասնակցել ռուս գրողների գրական հավաքույթներին: «Սովրեմեննիկ»-ի խմբագիր Պանաևի հետ Պատկանյանը մոտիկ ծանոթություն ուներ և հաճախակի հանդիպումներ էր ունենում նրա հետ: Հավանորեն «Սովրեմեննիկ»-ի խմբագրատանը նա հանդիպած լինի Նեկրասովի հետ, չնայած ուղղակի վկայություն չունենք այդ մասին: Պատկանյանը բարեկամական հարաբերության մեջ էր նաև Գոնչարովի, Մայկովի, Պոլոնսկու և ռուս մյուս գրողների հետ:

1856 թվականին Պետերբուրգում լույս է տեսնում Նեկրասովի բանաստեղծությունների ժողովածուն «Стихотворения Н. А. Некрасова». Այդ ժողովածուն արտակարգ մեծ հաջողություն է ունենում: Նեկրասովի անունը հնչում է ամենուրեք, հատկապես ուսանողության լայն շրջաններում: Ճարական կառավարությունը, տեսնելով Նեկրասովի գրքի հսկայական հաջողությունը և ազդեցությունը, խստիվ կերպով արգելում է նրա վերահրատարակությունը: Երբ լույս տեսավ Նեկրասովի բանաստեղծությունների վերահիշյալ ժողովածուն՝ Պատկանյանը գտնվում էր Պետերբուրգում և նա պատկանում էր այն երիտասարդ գրողների թվին, որոնց գրական ճակատագրի մեջ հսկայական նշանակություն ունեցավ Նեկրասովի բանաստեղծությունների այդ ժողովածուն: Նույն 1856 թվականին և հետագա տարիներին Նեկրասովի հետևություններ, նրա օրինակով, Պատկանյանը գրում է մի շարք բանաստեղծություններ: Նեկրասովի պոետական սուր ու խորիմաստ տողերը էպիգրաֆ են ծառայում Պատկանյանի մի շարք բանաստեղծությունների համար:

Նեկրասովի «Բարոյական մարդը» բանաստեղծությունը նույն 1856 թվականին Պատկանյանը «փոխադրում» կամ վերափոխելով գրում է «Անվնաս մարդը» բանաստեղծությունը, որը լայն տարածում է գտնում հայ ընթերցողների շրջանում: Իր այդ բանաստեղծության որպես էպիգրաֆ Պատկանյանը դնում է Նեկրասովի հետևյալ տողերը.

Живя согласно со строгою моралью,
Я никому не сделал в мире зла.

Պահպանելով Նեկրասովի բանաստեղծության հիմնական ուղղությունը, կառուցվածքային ձևը, Պատկանյանը որոշ մասերում հեռանում է Նեկրասովից և հայ իրականության հետ կապված սոցիալական նոր հարցեր է առաջադրում: Պատկանյանը փորձում է շատ ավելի օրինականորով ցույց տալ «անվնաս մարդու» ահավոր վնասները: Եթե «Բարոյական մարդը» բանաստեղծության մեջ Նեկրասովը շորս օրինակ բերելով ամբողջովին ոչնչացնում է «բարոյական մարդու» գարշելի կերպարը, ապա Պատկանյանը հալ իրականության մեջ շատ ավելի փաստեր է տեսնում նույնանման մարդու զազրելի արարքները մերկացնելու համար:

Մենք նշեցինք, որ Պատկանյանը Նեկրասովի բանաստեղծությունը վերափոխել է, բայց վերափոխելով այնուամենայնիվ նա մնացել է Նեկրասովի բանաստեղծության շրջանակներում: Այսպես, օրինակ, Նեկրասովը գրել է:

Приятель в срок мне долга не представил.
Я, намекнув по-дружески ему,
Закопу рассудить нас предоставил:

Закон приговорил его в тюрьму.
В ней умер он, не заплатив алтына,
Но я не злюсь, хоть злиться есть причина!
Я долг ему простил того же числа,
Почтиз его слезами и печалью...
Живя согласно с строгою моралью,
Я никому не сделал в жизни зла.

Նեկրասովի յայս տողերը վերափոխելով, Պատկանյանը հետևյալ ձևով է շարադրել այն.

Մի օր որդիս իրա կամքով, անհրաման,
Սընդուխիցս հանեց հինգ թե վեց թուման.
Ես իմացա, վրա հասա բռնեցի,
Ձեռքը կապած՝ դատավորին մատնեցի.
Շուտ չի անցավ, վախից խեղճը թույն կերավ.
Ահա՛, էսպես միակ հույսը իմ կորավ.
Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումս մարդու վրնաս չի արի:

Այսպիսով, նույն ժլատ դրամատերերի զոհերն են՝ մի դեպքում, «բարոյական մարդու» բարեկամը, որը բանտ է նետվում, ուր և նա մահանում է, մյուս դեպքում «անվնաս մարդը» հարազատ որդուն դատավորին է հանձնում և որդին թունավորվում ու մահանում է: Երկու դեպքում էլ այդ հանցավոր դրամատերերը բնորոշ սառնասրտությամբ կրկնում են.

Հետևելով միշտ օրինաց աշխարհի,
Ես կյանքումս մարդու վրնաս չի արի:

Նեկրասովի այս տողերը Պատկանյանը նույնությամբ կրկնում է այդ բանաստեղծության ամեն մի տունը վերջանալուց հետո, ինչպես այդ արել է Նեկրասովը:

Նեկրասովի ազդեցությունը շատ ավելի ցայտուն կերպով արտահայտվել է Ռ. Պատկանյանի «Երկու բանաստեղծ» վերնագիրը կրող բնորոշ բանաստեղծության վրա, որը նույնպես դրված է 1856 թվականին: Պոետը կարծես իրեն նպատակ է դրել ցույց տալու, որ իր պոետական դրոշի վրա ևս գրված է «նախ քաղաքացի և ապա պոետ» գեղեցիկ: Պատկանյանը իր «Երկու բանաստեղծ» ոտանավորի վերնագրի տակ փակագծում նշել է «նմանություն», և ապա, որպես բնաբան բերել է Նեկրասովի հայտնի բանաստեղծությունից հետևյալ երկտողը.

Блажен незлобивый поэт,
В ком мало желчи, много чувства...
(Նրանի՛ անշար այն բանաստեղծին,
Ում մաղձն է սակավ, զգացմունքը — լի...):

Ձգտելով «նմանվել» Նեկրասովին և որոշակի հետևելով նրան, Պատկանյանն իր բանաստեղծության մեջ նույնպես պատկերում է երկու իրարամերժ պոետների կերպարները: «Քաղցրախոս» առաջին պոետը փախչում է հասարակականից 8-4

բակական կյանքի դառնություններն ու շարիքները պատկերելուց: Նրա աչքին ամեն ինչ զեղեցիկ, ամեն ինչ խաղաղ ու լավ: Նա գինատատ խնճույճ է սիրում, կույս կանանց շրջապատ ու վարդ ծաղիկներ: Պատկանյանը ոչնչացնող ծաղրի է ենթարկում «մաքուր արվեստի» այդ խղճուկ երկրպագուհուն և նրա կողքին ոգեշնչված պատկերում է քաղաքացի պոետի վեհ կերպարը: Պատկանյանը ցույց է տալիս, որ «Դառն էր վիճակը, դառն էր կոշումը» վերջինիս, որ նրա ճանապարհը փշոտ է ու դժվարին:

Բայց նա միշտ հպարտ՝ մրնաց հաստատուն,
Հանճարն էր նորա միակ ձեռնածուն,
Անդողողոջ ոտքով անցավ այս աշխարհ՝
Հոգին անվրդով, ճակատը պայծառ.
Եվ մինչև վերջին րոպեն իր կենաց
Սրբախց չի հանեց հառաչանք, ոչ լաց:
Բայց երբ որ նորա անշնչացած մարմին
Ջազուկի սողնոց եղավ լուկ բաժին,
Եվ երբ շատ դարեր զրեղացին, անցան,—
Է՛հ՝ և այն ժամանակ մարդիկ իմացան
Ոչնչի ազնիվ սերը սրբոտի մեջ փակած,
Որ կույր աչքերուն երբե՛ք չերևաց.
Իմացան, որ կար նաև այնպես սեր,
Որ հաստ փաթաթով ծաղրի պատած էր:

Հիշենք, որ Նեկրասովի մոտ նույնպես քաղաքացի պոետի մահից հետո նոր զգում են, թե ինչպես ատելիով նա միշտ սիրելի է.

Со всех сторон его кланут
И, только труп его увидя,
Как много сделал он, поймут,
И как любил он — ненавдя!

Պատկանյանի 1856 թվականին գրված վերոհիշյալ բանաստեղծությունները, ինչպես և նրա մյուս բանաստեղծությունները ցույց են տալիս, թե ինչպիսի հսկայական ազդեցություն է ունեցել Նեկրասովի բանաստեղծությունների 1856 թվականի ժողովածուն երիտասարդ Պատկանյանի ստեղծագործական առաջին քայլերի վրա, ինչպես ոգեշնչել ու լիցք է տվել նրան:

Հետևելով Նեկրասովին՝ Պատկանյանը նրանից սովորել է տեսնել հասարակական կյանքի սովերոտ կողմերը և քննադատորեն պատկերել հայ բուրժուազիայի ապականված ու աշխանդակ բարքերը: Հաջողությամբ գիմա-կազերծ է արել հայ վաճառականության մերենաչությունները: Պատկանյանը զայրույթով ու ցասումով լի երգեր է գրել սուլթանական Բյուրքիայի, հայ ժողովրդի այդ դարավոր թշնամու, բարբարոսությունների դեմ: Գովերգելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, Պատկանյանը, իր աշխարհայացի սահմանափակության պատճառով, չի տեսել հայ ժողովրդի ազատագրության իսկական ուղին: Նահանջելով ռեալիզմից, նա բռնադատելի-կան առանձին հերոսների մեջ է որոնել ժողովրդի արդար պայքարի հաղթա-կան ելքը: Պատկանյանի աշխարհայացքի հակասությունները արդևակեցին նրան հասնելու Նալբանդյանի և Նեկրասովի պոեզիայի իդեական հստակու-թյան ու ղեմկրատական լայն ընդհանրացումների մակարդակին:

* * *

Իր զրական գործունեության առաջին շրջանում հայ մեծանուն վիպասան Բաֆֆին հանդես է եկել մեծ մասամբ որպես բանաստեղծ։ 1874 թվականին նա հրապարակում է իր բանաստեղծությունների առաջին հատորն «Փունջ» վերնագրով։ Նույն թվականին լույս է տեսնում «Փունջ»-ի երկրորդ հատորը, որտեղ չափածո ստեղծագործությունների հետ միասին գետնգլած էին նաև արձակ երկերը։ Չնայած որ հետագա տարիներին հասարակությանը նա հայտնի էր որպես արձակագիր, բայց բանաստեղծություններ նա շարունակում է գրել իր ողջ կյանքի ընթացքում և զրանց մի զգալի մասը տպագրվել են հայ պարբերական մամուլի էջերում, 70—80-ական թվականներին։

Գրական քննադատությունը քիչ է խոսել Բաֆֆու որպես բանաստեղծի մասին. մեծ վիպասանը սովորի մեջ է թողել բանաստեղծ Բաֆֆուն։ Բայց մեր կարծիքով չի կարելի ամբողջական պատկերացում ունենալ 60—70-ական թվականների հայ պոեզիայի մասին առանց անդրադառնալու Բաֆֆու շափածո երկերին։ Բաֆֆու պոեզիան շատ կողմերով է ուշադրավ, դա ոչ միայն հետաքրքիր է որպես մեծ վիպասանի ստեղծագործության մի շրջան, այլև որպես հայ պոեզիայի զարգացման մի էտապ, որի մեջ արտացոլված են այդ պոեզիայի մի քանի բնորոշ առանձնահատկությունները, առանձնահատկություններ, որոնք իրենց զարգացումն ու խորացումը գտնում են հայ պոեզիայի հետագա սերունդի ստեղծագործություններում։

1852 թվականին Բաֆֆին ընդունվում է Թիֆլիսի ռուսական գիմնազիան։ Դիմնազիայի տարիները Բաֆֆու համար խոշոր նշանակություն են ունենում։ Այդ տարիներին է, որ նա լարված ուսումնասիրում է ռուսերեն, սկսում է հիմնովին ծանոթանալ ռուս հարուստ գրականության։ Պոչկինը, Լերմոնտովը, Նեկրասովը, Տուրգենևը գտնում են նրա սիրելի գրողները։

Երբ 1858 թվականին Մոսկվայում սկսում է լույս տեսնել «Հյուսիսափայլ»-ը, նազարյանի և Նալբանդյանի խմբագրությամբ, Բաֆֆին կապ է հաստատում նրա խմբագրության հետ և «Հյուսիսափայլ»-ում տպագրում է իր «Աղթամարա վանքը» աշխատությունը, որի մեջ էր նաև նրա «Ձայն տուր, ով ծովակ» նշանավոր բանաստեղծությունը։ «Հյուսիսափայլ»-ի էջերում տպագրված Նալբանդյանի բանաստեղծությունները, հոգվածները, օրագրերը խոր տպավորություն են թողնում Բաֆֆու վրա և նա իր ամբողջ կյանքում խորին երախտագիտություն է վերաբերվել դեպի Նալբանդյանի զրական ժառանգությունը, դեպի նրա պալծառ հիշատակը։ Պատահական չէ, որ Բաֆֆին իր առաջին վեպը՝ «Սալլի»-ն նվիրել է Միքայել Նալբանդյանի հիշատակին։ Բաֆֆին գրել է. «Որհնյալ Մ. Նալբանդյանցին, միշտ օրհնյալ հիշատակին խորին մեծարանքով նվեր։ Ինձ քաղցր էր այդ պաշտելի տղամարդի հավիտենական հիշատակը հարգել. իմ աշխատությունց երախտյորիքը նորան ընծայելով։ Թեպետ «Սալլի»-ի հեղինակը չի ունեցել պատվելի հանգուցելու հետ խիստ մերձավոր ծանոթություն, բայց քանի և կապի հայոց լեզուն ու զրականությունը, Մ. Նալբանդյանցի անմահ հիշատակը միշտ կունենա յուր զգալի համակրանքը, ամեն մի հայի սրտում՝ մինչև դարերի վերջը»։

Ոչ միայն դեպի Նալբանդյանը, այլ առհասարակ դեպի ռուս ազատագրական շարժումները, հատկապես դեպի ռուս 60-ականները Բաֆֆին հանդես է բերել մեծ հետաքրքրություն։ Նա լավ ծանոթ էր Բելինսկու, Չերնիշևսկու, Դոր-

րույնությունների, նեկրասովի ստեղծագործություններին: Իր գրական-հրապարակախոսական հոգվածներում նա հենվել է գրանց ստեղծագործությունների վրա, մեջբերումներ է կատարել գրանցից:

Քանի որ քննադատությունը չի անդրադարձել Րաֆֆու պոեզիային, ուստի և ուսումնասիրության նյութ չեն դարձել այդ պոեզիայի մի քանի առանձնահատկությունները, նրա կրած ազդեցությունները: Րաֆֆին, թե՛ իր բանաստեղծություններում և թե՛ իր քննադատական հոգվածներում, որոշակի ընդգծել է պոեզիայի հասարակական դերն ու նշանակությունը, նա դեմ էր, այսպես ասած, «մաքուր արվեստի» բուրժուական թեորիային և հենց «Փունջ»-ի առաջին հատորի առաջաբանում նա նշում է, որ ինքը նպատակ է դրել հասարակական կյանքի անարդարություններն ու այլանդակությունները քննադատելու: «Ծս,— գրում է Րաֆֆին,— ներկայացնում եմ ձեզ մի ալբոմ, ուր դուք կտեսնեք զանազան այլանդակված պատկերներ՝ յուրյանց բարոյական և մտավոր տգիղություններով:— դոքա մեր հասարակական կյանքի տիպերն են: Իսկ իմ հրգերն — արձագանք են դառն հառաչանքի... Գուցե ոմանք կգատապարտեն մեր բացասական ուղղությունը, չնկատելով որևիցե ուրախալի երևույթ մեր ներկայացրած պատկերների մեջ: Բայց թող մեր անձնախաբեությունը չմոլորեցնե մեզ, մենք ուրախալի ոչինչ չունենք»:

Իր բանաստեղծություններում ու պոեմներում Րաֆֆին անդրադառնում է սոցիալական անարդարություններին, հայ աշխատավորության ճնշված ու հալածված վիճակին, կենցաղային այլանդակ բարքերին, պատմական հերոսական անձանց պատկերման, ինչպես և օտարերկրյա հալածանքների դեմ ուղղված ցասումնալի անցքերին: Խոսելով հայ իրականության ծանր ու վատթար վիճակի մասին, իր մի բանաստեղծության մեջ, Րաֆֆին 1871 թվականին գրել է.

Տիրում է խավար և աղքատություն,
Մշակը թշվառ գործում է, գործում,
Ազան խլում է դառն աշխատանքը,
Նորա արյունը՝ րամում է, ծծում...

Որու բանաստեղծները, հատկապես Պուշկինը, Լերմոնտովը, նեկրասովը մեծապես նպաստել են բանաստեղծ Րաֆֆու ստեղծագործական մտորումներին, օգնել են նրան պատկերելու հայ իրականության մի քանի բնորոշ կողմերը, սոցիալական ներհակությունները: Դեռևս յոնցյալ դարի 90-ական թվականների սկզբներին ռուս գրական-քննադատությունը նշել է, որ Րաֆֆին մեկն է հայ այն գրողներից, որ քաջ կերպով ծանոթ է ռուս գրականության: Այսպես, օրինակ, ռուս գրականագետ Ն. Ս. Նեկրուսովյան Րաֆֆու մասին կարգացած իր դասախոսության մեջ, ապա նաև 1892 թվականին տպագրած իր «Армянокий писатель Раффи» ծավալուն հոդվածում գրել է, որ Րաֆֆին «Շատ լավ գիտեր ռուսաց գրականությունը Պուշկինից սկսած, և թարգմանել է Տուրգենևի «Արձակ բանաստեղծությունները» /տես/:

Որու գրողներից ուշագրավ ու հետաքրքիր է հատկապես նեկրասովի ազդեցությունը բանաստեղծ Րաֆֆու պոետական ստեղծագործությունների վրա: Բացի նեկրասովյան բնորոշ մոտիվները շոշափելուց, Րաֆֆին ոգեշնչվել է

Նեկրասովի առանձին բանաստեղծությունների սոցիալական խոր բովանդակությամբ:

1872 թվականին Րաֆֆին դրում է «Դայակ» անունով ծավալուն մի բանաստեղծություն: Այդ բանաստեղծության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դա Նեկրասովի «Песня Еремушке» բանաստեղծության վերափոխված թարգմանությունն է: Րաֆֆին լիովին պահպանել է Նեկրասովի բանաստեղծության սյուժեն, բովանդակությունը: Այսպես, օրինակ, Նեկրասովի այդ բանաստեղծության մեջ նկարագրված անցորդը դիմելով կառապանին, ասում է նրան, որ խիստ շոգ է և այլևս հնարավոր չէ ճանապարհը շարունակել, որ ողջ գյուղը դաշտում է և միայն

У двора у постоялого
Только нянюшка сидит,
Закачав ребенка малого,
И сама почти что спит;

Через силу тянет песенку,
Да, зевая, крестит рот.
Сел я рядом с ней на лешенку,
Няня дремлет и поет:

Րաֆֆու բանաստեղծության մեջ պառավ դայակը, Նեկրասովի նյանյայի նման՝ օրորոցի մոտ նստած հորանջելով համարյա նույն երգն է երգում: Որոշակի հետևելով Նեկրասովի այդ բանաստեղծության, Րաֆֆին գրել է.

Ժամն էր կեսօրվա: Շնչավորքն արդեն
Կըհանգստանային արևի տոթեն,
Խրճթի դրանը ճապուկ ուռենին
Թել թել ոստերով սփռում էր հովանին:

Այնտեղ նստած էր պառավ դայակը,
Եվ օրորում էր քնած զավակը,
Մերթ հորանջելով և մերթ նիրհելով
Նղանակում էր երգը՝ երգելով:—

Նեկրասովի նյանյան, օրորոցի իր հին երգում, խրատում է երեխային, որ հարկավոր է պահպանել հին սովորությունները, կյանքում խոնարհ լինել, հարուստների, ուժեղների, մեծավորների առաջ գլուխ թեքել, նրանց հետ խաղաղ ապրել, որպեսզի դառն շանցնի սեփական օրերը:

Րաֆֆու մոտ պառավ դայակը նույնպես իր խրատներն ավարտում է Նեկրասովի նյանյայի համարյա նույնանման մտքերն արտահայտող խոսքերով.

Երբ որ դու մտնելու լինես
Կյանքի մեջ աշխարհային,
Պատվե ծերի դու ալիքը
Հսկ' նորա խրատին

Պահպանի՛ր դու մեր պապերի
Օրենքն ու ավանդություն,
Դուխդ ծըռե լեզնից մեծին,
Չունենաս հպարտություն:

Դոցանով դու կը վայելես
 Օրեր հանգիստ և պայծառ,
 Քնի՛, քնի՛, սիրուն թռչնակ
 Քո մոր սրտին մխիթար:

Նեկրասովի մոտ անժանոթ ուղևորը մոտենում է նյանյային և ասում է, տուր ես օրորեմ երեսային, իսկ ինքը քնի՛ր: Նյանյան համաձայնվում է, բայց ասում է, երգիր, որ երեսան հանդիստ քնի: Նեկրասովի ուղևորը պատասխանում է.

— Как не спеть! спою, родимая,
 Только, знаешь, не твою.
 У меня своя, любимая...
 «Баю-баюшки баю!»

Րաֆֆու մոտ նույնպես երիտասարդ ուղևորը մոտենում է դայակին ու ասում նրան.

— Թո՛ղ ինձ, դայակ, ես օրորեմ,
 Դու հոգնել ես, դու քնի՛:
 «Բայց դու տղին նանիկ ասա,
 Որ քնիցը չրզարթնի»:

— Նանիկ կասեմ, դու հանգիստ կա՛ց,
 Բայց ոչ քո երգի նման:
 Պառավը նիրհեց: Ուղևորը
 Սկսեց օրորել տղան:

Նեկրասովի ուղևորը նոր խրատներ է տալիս երեսային, որ նա չհետևի 4ին սովորություններին, օրենքներին, այլ կյանք մտնելուց պայքարի՝ ազատության, եղբայրության, հավասարության համար, ընդդեմ ճնշման, կեղծիքի, հանուն արդար աշխատանքի և այլն:

Րաֆֆու ուղևորը նույնպես իր օրորոցի երգում կրկնում է Նեկրասովի ուղևորի հանդուգն ու ազատամիտ խոսքերը, երբեմն վերափոխված, երբեմն էլ համարյա բառացի թարգմանությամբ: Ահա Րաֆֆու երիտասարդ ուղևորի օրորոցի երգի խրատական խոսքերը.

— Մի՛ հետևիր դու փտած, հեացած,
 Հիմար պապերիդ ծուռ օրինակին,
 Մի՛ հարմարիր քո մանուկ ուժերը
 Դու եռանդամուլ նոցա ճաշակին:

— Զի նոցա անշարժ մտքի ծնունդը
 Խավար կյանքի է արտադրություն,
 Ծաղկի՛ր նոր կյանքով, նոր հողով, սրտով,
 Տո՛ւր նորանց նոր ձև և նոր ղորություն:

— Մի՛ խեղդիր քո մեջ ձգտողությունքը
 Մարդկային ազատ հառաջդիմության,
 Տո՛ւր նորանց աճել, ազատ զարգանալ,
 Պահանջմունքի հետ ազատ բնության:

Առանց երկյուղի, համարձակ, վստահ,
Սորվե՛ իրական կյանքի պետքերին,
Գիտություն, արհեստ կոչվում են նոքա,
Մի՛ զոհիր նորանց տխմար կրքերին:

— Եվ հերոսական դառն ատելությամբ
Նախապաշարմանց դու փշրե՛ շղթան,
Հեռու վաղեմի սուտ, ցնորքներեն,
Պաշտպան կանգնի՛ր միշտ ճշմարտության:

— Կլիկեսս, այո, մի նոր երևույթ
Քո անբախտացած, խեղճ հայրենիքին,
Կըտաս մի նոր զարկ, զա՛րկ դեպի հառաջ
Խույլ — անշարժական նորա կյանքին:

Բացահայտ է, որ Բաֆֆին հետևելով Նեկրասովին, օգտվելով նրա ստեղծագործական պրիմներից, 70-ական թվականներին, հայ իրականության մեջ, որոշակի պայքարի կոչ է անում հին, փտած օրենքների, նախապաշարումների, անարդարության դեմ և դիմում է երիտասարդ նոր սերունդին, որ նա փշրի շղթան անշարժական կյանքի ու զարկ տա հայրենիքի առաջադիմության:

Նեկրասովի «Երոմուշկայի երգը» բանաստեղծությունը հետևյալ տողերով է վերջանում.

И тогда-то... Вдруг проснулося
И заплакало дитя.
Няня быстро встрепелулася
И взяла его, крестя.

«Покормись, родимый, грудкою!
Сыт?... Ну, баюшки-баю!»
И запела над малюткою
Снова песенку свою...

Բաֆֆին այս տողերը համարյա բառացի թարգմանում է.

Եվ այն ժամանակ... Ուղեորն յուր
Չավարտից խոսքը: Հանկարծ երեխան
Ծրվաց ճշարով, զարթնեցավ քնեն.
Վայալը կրկին օրորեց նորան,
Կրկին հին երգը սկսավ երգել,
Եվ յուր գոգի մեջ փայփայել, գրկել:

Նեկրասովի ազդեցության որոշակի արտահայտությունները նկատելի են նաև Բաֆֆու մյուս բանաստեղծությունների վրա, ինչպես, օրինակ, «Խրատ հայ բանաստեղծին», «Պոետ» և այլն: Բայց մի առանձին հետաքրքրություն է ներկայացնում Բաֆֆու «Սառա» պոեմը, որը դրված է Նեկրասովի «Սաշա» պոեմի օրինակով: «Սաշան» Նեկրասովի լավագույն դրվածքներից է: Գրական քննադատությունը վաղուց նշել է, որ այդ պոեմը ողու կլասիկ դրականության փայլուն նվաճումներից մեկն է: Ուշագրավ է հատկապես գեղջկուհի Սաշայի կերպարը, որը ունենում է ժամանակի առաջավոր դադափարներով, ամբողջովին տարված է գյուղի հասարակական հոգսերով: Չնայած իր երիտասարդ

տարիքին, նա արագ կերպով գիտակցում է իրեն շրջապատող ճորտ գյուղացիության ծանր վիճակը, «աղքատների հետ նա մտերմանում» ու «սփոփում է նրանց»։ Սաշան հայրենասեր կնոջ հմայիչ կերպարն է, այդ կերպարի մեջ է, որ հետզհետե մարմնանում են իր հայրենիքի հոգսերով մտահոգված ուսանողի կնոջ փայլուն հատկանիշները։ «Սաշա» պոեմը հայրենասիրական հուզիչ մի երկ է, որ ընթերցողների վրա թողնում է անջնջելի տպավորություն։

Նեկրասովի այդ պոեմը երիտասարդ Րաֆֆու համար ստեղծագործական նոր հորիզոններ է բացում։ «Սաշա»-ի օրինակով Րաֆֆին գրում է «Սառա» անունով մի սյունի իր հայրենիքի կյանքից։ Սյունետային կառուցվածքի, կերպարների հոգեբանական կացություն, բնության նկարագրության և ուրիշ շատ տեսարաններ Րաֆֆին ուղղակի ընդօրինակել է Նեկրասովից։ «Սառա» պոեմը նույն ձևով է սկսվում, ինչպես և «Սաշա»-ն։ Իր պոեմի նախերգանքում Նեկրասովը նկարագրում է հերոսի վերադարձը դեպի հայրենիք.

Հաշտված եմ սրտով, հայրենիք իմ վես,
Քեզ մոտ եմ եկել սիրող որդու պես։

Րաֆֆու հերոսը համարյա նույն խոսքերով է դիմում հայրենիքին.

Նա շատ տանջվեցա... հոգնեցա իսպառ...
Այժմ հաշտվում եմ քախտիս հետ թշվառ,
Դեպ քեզ, Պարսկաստան, հայրենիք անգին,
Տարագիր որդիդ դառնում է կըրկին։

Նեկրասովի հերոսուհին՝ Սաշան 16 տարեկան է, նա դեռ չգիտե թե ինչ են կյանքի դառնություններն ու ցավերը. դեռատի աղջիկը դեռ նոր է փթթում ու հասունանում.

Քայքայված է խուլ վայրում Սաշան
Հոգու պարզությունը իր նախնական.
Փթթում է կարմրում, դառնում է հասուն
Դեռատի աղջիկը ձեր սիրասուն։

Սաշան չգիտե ոչ կիրք, ոչ էլ ցավ,
Տասնվեց տարին թեև լրացավ...

Րաֆֆին հավանորեն չի ցանկացել, որ իր հերոսուհին տարիքի և զգացմունքների տեսակետից տարբերվեր Սաշայից, ուստի և գրել է.

Որպես վայրենի՝ ճոխ, անփուլթ ծաղիկ
Աճում էր նոցա դեռահաս աղջիկ,
Նա շուներ կրրեր, չըգիտեր հոգսեր,
Նորան ծանոթ չէր՝ ինչ է արդյոք սեր։
Արդեն տասն և վեց լրացավ տարին,
Չըգիտեր աշխարհի նա ռարն ու րարին...

Դժվար չէ նկատել, որ Րաֆֆու այս տողերը Նեկրասովի վերը բերած տողերի ազատ թարգմանությունն է.

Սաշայի ապրումները նկարագրելիս Նեկրասովը գրել է.

Գնում ես դաշտով — ծաղկունք բուրալից,
Երկինք ես նայում, կապույտ եթերից...
Խորհում է Սաշան, — անմիտ հեծեծում...
Կյանքում ամեն ինչ խնդրվում, ցնծում:

Րաֆֆու Սառան բնության ազատ գրկում նույն ձևով է ընկալում իր շրջակայքը.

Շնչում է ազատ Սառայի կուրծքը,
«Ինչ հրաշալի է աստծո գործքը...»
Նայում է շուրջը — բոլորը ծաղկունք,
Անուշ ցնծությամբ երգում են թռչունք:

Նեկրասովի պոեմում կարդում ենք.

Բայց ջաղացի մոտ գետն է կատաղած,
Դառն է կապանքը... իր տեղն է նեղված:
Ո, դժբախտ, ազատ թռչել է ուզում,
Սոռում է, գոռում, փրփուր է դիզում...

Նույնանման պատկեր մենք տեսնում ենք Րաֆֆու մոտ.

Պարկը շալակին դեռ նոր գյուղացին
Տանում է աղալու պարենն յուր հացին.
Գոռում է ջաղաց, թունդ ժայթքում է ջուր,
Եվ րամբակի նժան սպիտակ փրփուր:

Երկու պոեմների մեջ շատ պատկերներ, նկարագրություններ, հոգեբանական դիպվածներ նույնանման են: Րաֆֆու հերոսուհին դա նույն Սաշան է հայ իրականության մեջ, հարմարեցրած տեղի սովորություններին ու բարքերին: Սաշայի պես Սառան գործունյա է, արթուն իր շրջապատի նկատմամբ, անհանգիստ: Գյուղի աշխատանքի եռուն ժամին նա իր ծնողների մոտ է, օգնում է նրանց, թեթևացնում նրանց ծանր աշխատանքը:

Նեկրասովի Սաշան ծանոթանում է ազնվական Լև Ագարինին, նրանք լարեկամանում են և անվերջ զրուցում.

Ճիշտ ասած խոսքն էր երգի պես հոսում,
Աստված իմ որբան շատ էին խոսում:

Րաֆֆու Սառայի հետ ծանոթանում է գյուղի Մելիքի որդին և

Նստում են նոքա, խոսում են նոքա,
Խոսում են... խոսում... բնավ վերջ չըկա:

Լև Ագարինը մեկնում է գյուղից և Սաշան դառնում է մտախոհ, տխուր, անհանգիստ գիշերներ է անցկացնում: Նույն ապրումներն է ունենում նաև Սառան, երբ Մելիքի տղան մեկնում է «հեռու մի աշխարհ»: Հետամնաց հայ

իրականության մեջ Սառային հարկադրում են ամուսնանալ շտիրած մարդու հետ, Սառան ըմբոստանում է ծնողների կամքին, գոյություն ունեցող բարքերին ու սովորություններին և չի ուղում ամուսնանալ նահապետական սովորությունների համաձայն դա ծանր հանցանք է և դյուղի իշխող բարքերի ճնշման տակ աղջկան ուղում են ամուսնացնել տանուտեր Մինասի որդու հետ։ Սառան թույն է խմում և եկեղեցում ամուսնական ծիսակատարության ժամանակ մահանում։ Սառային թաղում են և

Քանի օրից ետ մի երիտասարդ
Սրտով վշտահար, դեմքով անզվարթ,
Գերեզմանի մի սև քարի վերա
Գրում էր հետևյալ տրիսուր տողեր։—

«Մինչ ե՞րբ, դու խավար բռնակալություն,
Կըճնշես առտնին մեր ազատություն.
Մինչ ե՞րբ մեղանից քո սև ճանկերը
Կրխեն Սառայի նրման զոհերը...»

Բաֆֆու Սառան նեկրասովի Սաշայի համեմատությամբ դեռևս հետամնաց է, սահմանափակ։ Նահապետական շրջապատը իր դաժան օրենքներով արգելակում է Սառայի ազատ, անկաշկանդ զարգացման, նրա երազանքների իրականացման, և բնականորեն նա չէր կարող հասնել Սաշայի իդեալական հասունության։ Սառան զոհ է դառնում ասիական խավար ու բիրտ օրենքներին։ Նրա մահը յուրովի ըմբոստացում է տիրող կարգերի դեմ, կարգեր, որտեղ սերը, ազատությունը, դեռևս շղթայված են ֆեոդալական կարծրացած օրենքներով։ Սառայի կերպարը ցույց է տալիս, որ այդ իրականության մեջ լուրջ խմորումներ են առաջացել, որ ազատության տենչը սուր ճեղքվածքներ են առաջացրել, ճեղքվածքներ, որ մի օր պիտի խորտակեն այդ դաժան կարգերն ու բարքերը։

Պետք է նշել, որ Բաֆֆին համարյա չի շոշափում նեկրասովի պոեմում ծավալված իդեալական այն պայքարը, որ ի դեմս Լև Ադարինի նա մղում է լիբերալիզմի դեմ։ Հավանորեն իդեալական այդ պայքարը դեռևս հող չունեի արևելյան հետամնաց այն իրականության մեջ, որտեղ գործում էին Բաֆֆու հերոսները։

Մենք անհրաժեշտ համարեցինք հանդամանորեն կանգ առնել Բաֆֆու «Դայակ» բանաստեղծության, ինչպես և «Սառա» պոեմի վրա, դրանց օրինականերով ցույց տալու, թե ուսումնառած բանաստեղծը ինչպիսի խոշոր աղղեցություն է թողել 70-ական թվականների հայ պոեզիայի վրա, ինչպես հայ բանաստեղծն ընդօրինակել է նրան ու ստեղծել սոցիալական լիարժեք պոետական ստեղծագործություններ հայ ընթերցողների համար։

60—70-ական թվականների հայ բանաստեղծները՝ Շահազիզը, Բարխուդարյանը, Պատկանյանը, Բաֆֆին ու մյուսները, դիսավորապես արձագանքել են նեկրասովի քաղաքացիական-հրապարակախոսական մոտիվներին և իրենք հանդես են եկել այդ մոտիվներով գրված մի շարք արժեքավոր բանաստեղծություններով, որոնց մեջ ցայտուն կերպով արտահայտվել են նեկրասովի աղղեցությունը, նրա պոետական շունչը։ Նեկրասովի սատիրական

ստեղծագործություններով ոգեշնչված հայ բանաստեղծների այդ սերունդը մերկացրել է հայ բուրժուազիայի նեխված բարքերն ու սովորությունները:

80-ական թվականների վերջերին հանդես են գալիս հայ բանաստեղծների մի նոր սերունդ՝ Հովհաննես Հովհաննիսյան, Ալեքսանդր Մատուրյան, Հովհաննես Խումանյան և ուրիշները. այդ սերունդը շատ ավելի խորը, շատ ավելի լայն է ըմբռնում Նեկրասովի հարուստ պոեզիայի էությունը, ոգին, նրա գեղարվեստական ձևերն ու առանձնահատկությունները: Դեմոկրատ բանաստեղծների այս սերունդը, ավելի մոտ կանգնած լինելով ժողովրդին, իմանալով նրա վիշտն ու թախիծը, նրա ճնշման ու շահագործման ծանր պայմանները, իրենց երկերում ավելի հարազատ ձևով են արտահայտում ժողովրդի ցավերն ու մտորումները և Նեկրասովն իր անմահ ստեղծագործություններով խորապես օգնել է բանաստեղծների այդ սերունդին հարազատ ու ճշմարտացի արտահայտելու իրավագուրկ, ճնշված ու հալածված հայ ժողովրդի դառը կյանքը:

Փորձենք համառոտակի անդրադառնալ այդ պոետներին և ցույց տալ այն բարերար ազդեցությունը, որ Նեկրասովն ունեցել է նրանց ստեղծագործությունների վրա:

* * *

Հայ կլասիկ բանաստեղծներից Հովհաննես Հովհաննիսյանը սերտ կապված էր ուս գրականության, ուսական պոեզիայի հետ և դաստիարակվել էր այդ պոեզիայի լավագույն տրադիցիաներով: Նրա սիրելի պոետներն ու գրական ուսուցիչներն էին Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը և ուրիշները: Հովհաննիսյանն անցյալ դարի 80-ական թվականներին սովորել և ապա հաջողությամբ ավարտել էր Մոսկվայի համալսարանի գրական ֆակուլտետը: Նա սքանչելի կերպով տիրապետում էր ուս լեզվին և շատ լավ գիտեր ուս գրականության պատմությունը, սկսած նրա հնագույն ժամանակներից մինչև իր օրերը: Հովհաննիսյանն ուս գրականության եռանդուն պրոպագանդիստներից մեկն էր հայ իրականության մեջ: Երկար տարիներ շարունակ աշխատելով Գեորգյան ճեմարանում, դասավանդելով այնտեղ ուս գրականություն ու լեզու, նա անսահման սեր ու ջերմ հետաքրքրություն է առաջացրել ուսանողության մեջ ուսական կուլտուրայի, արվեստի ու գրականության, ուս գրականության մեծագույն հանճարներ Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Գոգոլի, Տուրգենևի, Տոլստոյի, Զեխովի, Գորկու և մյուսների հանդեպ:

Գեորգյան ճեմարանի նախկին սաներից մեկը, ընկ. Վ. Փոթեյանը, իր ուսուցիչ Հ. Հովհաննիսյանի մասին հետևյալն է գրում. «Գեորգյան ճեմարանի բարձր դասարաններում, իմ աշակերտության շրջանում, ուսաց լեզուն, գուգահեռ նաև գրականությունը, ավանդում էր հայ անվանի բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը: Ռուսերենի ու հայերենի միաժամանակ անթերի տիրապետումը, լեզվական մեծ կուլտուրան ու նուրբ ճաշակը և, վերջապես, Հովհաննիսյանի՝ սիրելի բանաստեղծի ու սքանչելի մարդու անձնական հմայքը, ուսաց լեզվի ու գրականության դասերը դարձնում էին մեզ համար անսահման հետաքրքիր, կարելի է ասել՝ մեծ բավականության աղբյուր: Մեր բազմաթիվ ուսուցիչներից շատ քչերին էր հաջողվում աշակերտների մեջ այնպիսի մեծ սեր ու հետաքրքրություն զարթեցնել դեպի իրենց ավանդած առարկան, ինչպես այդ կարելի է ասել Հովհաննիսյանի մասին ուս մեծ լեզվի ու գրականության նկատմամբ: Չսահմանափակվելով ուսերենի դասադրքում

զետեղված նյութերով, Հովհաննիսյանը հանձնարարում էր կարդալ ուսու գրողներին բոլոր կարևոր երկերը և հետաքրքրվում էր, թե ինչ շահով ենք մենք յուրացնում կարդացածը: Մեծ սիրով ու հետաքրքրությամբ էինք լսում մենք, երբ նա դասերի ժամանակ այս կամ այն առիթով կարդում էր ուսու բանաստեղծների գործերը, հատկապես իր թարգմանությամբ: Բնական էր, որ ուսու լեզուն ու գրականությունն այդպիսի դասատուի ձեռքի տակ անցնելուց հետո նրա շշակերտներն ու ուսանողները հետագայում պետք է դառնային ուսական լեզվական ու գրական մեծ կուլտուրայի պրոպագանդիստները հայ իրականության մեջ»:

Մեծ էր Հովհաննիսյանի դերը Նեկրասովի պոեզիայի մասսայականացման գործում: Նա առաջին նշանավոր հայ բանաստեղծն էր, որ թարգմանել էր Նեկրասովի երկերը:

Հովհաննես Հովհաննիսյանը Մոսկվայի Հաղարյան ճեմարանի աշակերտ էր, երբ մահացավ Նեկրասովը: Նա տեսավ Մոսկվայի հասարակության, հատկապես գրական ու կուլտուրական շրջանների վրա, Նեկրասովի մահվան գործած ցնցող տպավորությունը և համալսարանական երիտասարդության անսահման սերն ու վիշտը ժողովրդական մեծագույն պոետի նկատմամբ: Ընթերցելով Հովհաննիսյանը նույնպես խորը կերպով վշտացած էր սիրելի ու մեծ պոետի անսպասելի կորուստի համար:

Անցյալ դարի 80-ական թվականներին մեծ էր Նեկրասովի ազդեցությունը ոչ միայն ուսու, այլև Ռուսաստանի ժողովուրդների գրականության մեջ. ինչ խոսք, որ Նեկրասովի ազդեցության տարածման գործում հսկայական դեր էր կատարել ուսու ուղեւորներ-դեմոկրատների զրական-քննադատական միտքը: Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, Պրսարևը լայն ճանապարհ էին հարթել Նեկրասովի պոեզիայի հաղթանակի առաջընթացի համար: Բանաստեղծների նոր սերունդն աճում ու ձևավորվում էր Նեկրասովի ուժեղ ազդեցությամբ:

Նեկրասովի վիշտն ու թախիծը, որ պայմանավորված էր ցարական Ռուսաստանի դաժան իրականությամբ, խորթ չէին նաև հայ առաջավոր պոետների նոր սերունդի և առաջին հերթին Հովհաննես Հովհաննիսյանի համար:

Հայ ժողովրդի կյանքը նույնքան ծանր էր, որքան և այն ժողովրդի կյանքը, որի տառապանքները, վիշտն ու թախիծը, պայքարի մտորումները դարձել էին Նեկրասովի պոեզիայի ոգին ու էությունը:

Տեսնելով հարազատ ժողովրդի դառը վիճակը, նրա իրավադուրկ, ճնշված ու անմխիթար դրությունը Հովհաննիսյանը վշտացած գրում է, թե իր քնարից և բանաստեղծի հնչի ուրախության ձայն այնքան ժամանակ, քանի դեռ հայ ժողովուրդը կշարունակի հյուծվել ու արնաքամ լինել:

Այնտեղ, ուր արցունք, շղթա և ավեր,
Ուր լսվում է յոկ հառաչանք լալագին,
Քո քնարիցը թող ուրախ ձայններ,
Ով թշվառ երգիչ, բնավ չլսվեն:

Իր բազմաթիվ բանաստեղծություններում և հատկապես «Խորհրդածություններ շքամուտքի մոտ» բանաստեղծության մեջ, Նեկրասովը ցույց է տալիս ժողովրդի անհուն վիշտը, նրա հոգին մորկող հառաչը, որը կարծես և՛ դառն է ժողովրդի համար: Նեկրասովը գրում է.

Այնպիսի անկյուն ես չեմ տեսել դեռ,
Ուր քո հերկողը և պահապանը,

Ուր ուռւ ուամիկը միշտ չհառաչեր:
Նա հառաչում է դաշտերում, ճամփին,
Նա հառաչում է բանտում, աքսորում,
Հանքերի մեջ՝ շղթան ձեռներին,
Կալում, դեզի տակ, տափարակներում՝
Դիշերն անցնելով բաց երկնքի ներքո.
Նա հառաչում է իր տան մեջ անշուք,
Աստծու արևի լույսից էլ դժգոհ,
Ամենայն մի խուլ քաղաքում խղճով.
Նա հառաչում է դատարանների
Եվ պալատների դռների առաջ,
Նա հառաչում է սիրտը վշտով լի...

Տեսնելով հարազատ ժողովրդի նույնանման դառը վիճակը, նրա իրավազուրկ, ճնշված ու անմխիթար դրությունը՝ Հովհաննիսյանը Նեկրասովի որոշակի և ուժեղ ազդեցությամբ գրում է.

Այնտեղ, ուր արցունք, շղթա և ավեր,
Ուր լսվում է լուկ հառաչանք լալագին,
Քո քնարիցը թող ուրախ ձայներ,
Ով թշվառ երգիչ, բնավ չլիսվին...

Նեկրասովյան մոտիվները հարազատ ու մոտ են եղել Հովհաննիսյանի սրտին, և այդ հարազատությունն օղնել է հայ անվանի բանաստեղծին ավելի լավ ճանաչելու իր ժողովրդին, ավելի խորը զգալու նրա ցավերը ու ավելի վառ արտահայտելու նրա մտորումներն ու երազանքները:

*
*
*

Հայ առաջավոր պոետներից հատկապես Ալեքսանդր Ծատուրյանի ստեղծագործությունների մեջ շատ ավելի լայն, ցայտուն ու բազմակողմանի կերպով են արտահայտվել Նեկրասովյան տրագիկականները, նրա ստեղծագործական մոտիվները: Ծատուրյանը նույնպես անցել էր կյանքի այն դաժան ու ծանր դպրոցը, ինչ որ Նեկրասովը: Նյութական կարիքը համարյա միշտ հետապնդել է դեմոկրատ բանաստեղծին: Վաղ հասակից զրկվելով ծնողներից, չունենալով ապրուստի ոչ մի միջոց, նա լիովին ճաշակում է աղքատ կյանքի բոլոր դաւնությունները: Ծատուրյանն այն բանաստեղծներից էր, որ մանուկ հասակից տեսել էր հասարակ ժողովրդի նիստն ու կացը, նրա աշխատանքային ծանր պայմանները, նյութական զրկանքները, կարիքի ու հոգսի ամենօրյա տառապանքները: Հետագայում այդ բոլորն էլ հարուստ նյութ են ծառայում Ծատուրյանի բանաստեղծական ստեղծագործության համար:

1888 թվականին Ծատուրյանը տեղափոխվում է Մոսկվա, ուր և անց է կացնում իր ամբողջ կյանքը: Ծատուրյանը չկարողացավ բարձրագույն կրթություն ստանալ և ստիպված էր իր ուսման թերին լրացնել համառ ու քրտնաջան աշխատանքով: Մոսկվայում նա հիմնովին ուսումնասիրում է ռուս կլասիկ դրականությունը, հատկապես Պուշկինի, Լերմոնտովի, Կոլցովի, Նեկրասովի ստեղծագործությունները: Նա հիացած էր այդ մեծ բանաստեղծների պոետական բարձր թռիչքով, խոր իդեալանությամբ, անսահման մարդասիրությամբ ու ժողովրդայնությամբ: Ահա թե ինչու հենց այդ պոետները մեծ ազդեցություն

ունեցան Մատուրյանի ստեղծագործությունների վրա. ինքը՝ պոետը երախտագիտության բարձր զգացումով է նշում այն բարերար ազդեցության մասին, որ ունեցել է ռուս գրականությունը հայ գրականության և հատկապես իր ստեղծագործությունների վրա: 1902 թվականին Յու. Վեսելովսկուն ռեզիդենտում Մատուրյանը գրում է. «Ինչ վերաբերում է ռուս գրականության և հատկապես ռուսական պոեզիայի ինձ վրա արած ազդեցությանը, ապա այդ հրաշակական է: Իմ համեստ քնարը շատ և շատ է պարտական այդ ազդեցությանը: Իմ կյանքի ծանր պայմանների և հանգամանքների շնորհիվ, չստանալով լուրջ կրթություն, ես մտավորապես և հոգեպես աճել և զարգացել եմ, ամենից առաջ, իհարկե, մայրենի, ապա և ռուս գրականության շնորհիվ»:

Այս անկեղծ խոստովանությունից հետո Մատուրյանը կանգ է առնում Պուշկինի և Լերմոնտովի, Նեկրասովի ու Պլեշչեևի ստեղծագործությունների, նրանց այն երկերի վրա, որոնք հմայել ու հուզել են նրան, սկսած դրական գործունեության ամենավաղ շրջանից: Պոեզիայի հետ մեկտեղ Մատուրյանը սիրել է և ռուսական հոյակապ արձակը, նրա մեծագույն վարպետների՝ Դոդոլի, Տուրգենևի, Տոլստոյի, Սալտիկով-Շչեդրինի, Չեխովի, Գորկու ստեղծագործությունները:

Մատուրյանը հայ անվանի այն բանաստեղծներից է, որոնք շատ բան են սովորել ռուս ժողովրդի մեծ բանաստեղծ Նեկրասովի ստեղծագործություններից: Նեկրասովի քաղաքական պոեզիան նրա համար միշտ եղել է բանաստեղծական այն բարձր դադաթը, որին նա ձգտել է հասնել իր ողջ կյանքում:

Նեկրասովի նման, իր «Պոետին» բանաստեղծության մեջ Մատուրյանը պահանջում է, որ պոետը լինի ժողովրդի հետ, ապրի նրա հոգսերով ու նրան հուզող հարցերով, օգնի նրան «խավարի կապանքն անվախ փշրելու»: Դիմելով պոետին Մատուրյանը մատնացույց է անում նրան դեպի ժողովուրդը:

Ապրի՛ր նորա հետ, նորա տանջանքով,
Սի՛ դժվիր նորան ձեռքդ պարզելու...
Դու ուժ ներշնչիր նորան երգերով —
Խավարի կապանքն անվա՛խ փշրելու:

Նեկրասովի ազդեցությունն շատ ավելի ցայտուն արտահայտվել է Մատուրյանի «Թուխը, այ իմ երգ...» բանաստեղծության մեջ, որտեղ ոչ միայն որոշակի է արտահայտված իր ժողովրդի հանդեպ բանաստեղծի ունեցած քաղաքացիական պարտքը, այլև մատնանշված է այն աշխարհը, ուր պիտի հնչի իսկական պոետի երգը:

Մատուրյանը երբեք չի նահանջել պոետին ներկայացված նեկրասովյան բարձր պահանջներից, այլ հաղթահարելով ամեն տեսակի դժվարություններ, ձգտել է իրականացնել այդ պահանջները:

Նեկրասովի պոեզիայի սուր տողերը էպիգրաֆ են ծառայել Մատուրյանի լավագույն բանաստեղծություններին: Մատուրյանն ավելի է մոտենում Նեկրասովին, ավելի է հոգեկից դառնում նրան «Գրչի հանաքներ» սատիրական բանաստեղծությունների իր դրքով: Պոետն անխնա մերկացնում է բուրժուական հաւարակարգում իշխող կաշառակերությունը, կեղծիքը, դարձնելի բարբերը, մարդուն ստորացնող, ճղճիմ ու այլանդակ սովորությունները:

Նեկրասովի «Օրորոցի երգը» նշանավոր բանաստեղծության ազդեցության մասին, իսկ որոշ տեղերում նմանության մասին, Մատուրյանը գրում է իր «Ժամանակակից օրորանք» բանաստեղծությունը: Օգտագործելով Նեկրասովի վերոհիշյալ բանաստեղծության մոտիվը, չափը, գաղափարական նույն դիրքերից էլ Մատուրյանը մերկացնում է «Ժամանակակից օրորանքի» ողջ փիլիսոփայությունը:

Օ՛ր-օ՛ր-օ՛ր, բալաս, օ՛ր-օ՛ր-օ՛ր, ջանի՛կ,
Կուզեմ քեզ կյանքում տեսնել երջանի՛կ:
Հերբդ հարուստ էր, հարուստ էլ մեռավ,
Ո՛ւմ փողեր ասես կյանքում չըկերավ:
Ժըլատ ու գըծուծ, մարդ չէր մեղքանում,
Խիղճը փողումն էր, հոգին—գրպանում:

Դրպանից զոռով կոպեկ հանելիս,
Հետն էլ հոգուց էր մի կտոր տալիս...
Խղորմի՛ հոգուն... էդ ճանապարհով
Քեզ լի գանձ թողեց ու կյանք ապահով:

Օ՛ր-օ՛ր, բալաս, օր-օր-օ՛ր, ջանի՛կ,
Կուզեմ քեզ կյանքում տեսնել երջանիկ...

Կըվարձեմ դայակ ու ղաստիրակ՝
Մաղել ու մյուսիո, որ ազատ, արագ
Միտքդ զարգացնեն, աչքդ բաց անեն,
Կյանքի նորանոր ճամփերով տանեն...
Փորձ, շիկ ու ճաշակ շատ ունեն նրանք,
Ունենդ գառի պես, դու կյանք չես մտնիլ:
Կյանքի համ ու հոտ, գաղտնիքներ քոլոր
Նրանք լավ գիտեն... Որդի ջան, օ՛ր-օ՛ր...

Թվում է, որ Մատուրյանի «Ժամանակակից օրորանք» բանաստեղծությունից բերած այս հատվածն էլ բավական է լիովին համոզվելու համար, թե ինչպես Նեկրասովի «Օրորոցի երգը» օգնել է նրան ստեղծելու իր «Ժամանակակից օրորանքը» սատիրական հոյակապ բանաստեղծությունը, որի մեջ արքան վարպետորեն մերկացված է երևեսանների դաստիարակության բուրժուական հաշիվներով լի մորալը:

Հայ դեմոկրատական պոեզիայի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Ալեքսանդր Մատուրյանի ստեղծագործությունները ցույց են տալիս, թե որքան խոշոր է եղել ռուս ժողովրդի մեծ բանաստեղծի դերը հայ պոետ-քաղաքացու հոգևոր դաստիարակության, պոետական ճաշակի և դրական ու քաղաքական բարոյականների ձևավորման գործում:

* * *

Հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը սերտ կերպով կապված էր ռուս գրականության և հատկապես ռուսական պոեզիայի հետ: Իր ստեղծագործական առաջին քաջերից նրա սիրելի ուսուցիչներն էին Պուշկինն ու Լերմոնտովը, ապա Նեկրասովը և մյուս մեծանուն ռուս բանաստեղծները: Տուրի Վեսելովսկուն ուղղած նամակում Թումանյանը գտնում է նույնիսկ, որ «ռուսաց բանաստեղծները, գլխավորապես Լերմոնտովը և ապա Պուշկինը

միշտ ինձ ավելի հարազատ են թվացել, քան մեր հայոց բանաստեղծները (խոսքս իմ նախորդ շրջանի մասին է)»:

Իր հոգիւածներում, ելույթներում, նամակներում Թումանյանը մեծագույն հիացմունքով է խոսում ռուսական պոեզիայի ժողովրդայնության, հումանիզմի, գեղարվեստական բարձր արվեստի մասին: Նա, ամենայն անկեղծությամբ, հայտարարել է «ես սկսել եմ ռուսաց բանաստեղծների ազդեցության տակ»: Նեկրասովը ռուս այն մեծ բանաստեղծներից մեկն է, որ իր պոեզիայով խորապես ազդել է Թումանյանի վրա:

Ինչպես հայտնի է, նախասովետական Հայաստանը գյուղացիական երկիր էր, և Թումանյանն իր ստեղծագործություններն ամբողջովին նվիրել է հայ գյուղին, հայ աշխատավոր գյուղացիության ճնշման ու շահագործման, նրա վշտի ու հառաչանքի պատկերմանը:

Նեկրասովի ազդեցությունը արտահայտվել է Թումանյանի «Հառաչանք» անավարտ պոեմի, «Գութանի երգի» և մի քանի այլ բանաստեղծությունների վրա: Նեկրասովի «Ո՛վ է Ռուսիայում լավ ապրում» պոեմը մեծապես օգնել է Թումանյանին ոչ միայն «Հառաչանք»-ի մտահղացման, այլև նրա ոճական ու արտահայտչական նոր ձևերի ստեղծման գործում: Նեկրասովի վերոհիշյալ պոեմի «Սավլին, սրբառուս բոգատիրը» գլուխը լիովին կարող է հաստատել մեր միտքը: Ինչպես Սավլին, այնպես էլ «Հառաչանք» պոեմում ծեր գյուղացին պատմում է, թե ինչպիսի ծանր վիճակում է գտնվում գյուղը, ինչպես դատանորեն շահագործվում ու ճնշվում է գյուղի աշխատավորը: Եվ ինչքան հարազատ, համահնչյուն են երկու մեծ բանաստեղծների զայրույթի ու ցասման խոսքերը, նրանց բողոքն ու ատելությունը ցարական բռնակալության դեմ:

Հարազատ ու սրտակից է եղել Նեկրասովը Թումանյանի համար:

Ինչպես Հովհաննիսյանն ու Ծատուրյանը, Թումանյանը նույնպես թարգմանել է Նեկրասովի պոեզիայի լավագույն նմուշները:

Նեկրասովի քաղաքացիական-ռևոլյուցիոն պոեզիան ոգեշնչել ու ստեղծագործական լիցք է տվել հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանին: Պատանի տարիներին գալով Բաքու, ռևոլյուցիոն տրամադրություններով համակված երիտասարդության ազդեցությամբ, նա, ինչպես ինքն է վկայում իր վաղ շրջանի «Հիշատակարաններ»-ում, կլանված կարդում է ռուս դրողների ստեղծագործությունները, հատկապես տարվում է Բլինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Իբրցենի, Նեկրասովի ստեղծագործություններով: «Արգելված դրքերից,— դրում է Հակոբյանը,— մեծ ազահությամբ կարդում էի Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և այլ գաղտնի գրքեր, որ ամառը բերում էին Ռուսաստանից»¹:

Բնորոշ է, որ քսան տարեկան Հակոբյանը, ռուս պոետներից մի առանձին սիրով տարվում է Նեկրասովի պոեզիայով, կարդում հրապարակի վրա եղած սրա բոլոր գործերը, բերանացի անում նրա մի շարք բանաստեղծությունները և ընկերների շրջանում ոգեշնչված արտասանում դրանք: 1887 թվականին իր «Հիշատակարան»-ում Հակոբյանը գրում է. «Բաքու ընկնելով սիրեցի ու կարդալուց հետո ամբողջովին տարվեցի Նեկրասովով»²:

Ուշագրավ ու բնորոշ է այն հանգամանքը, որ խոր ու բաղձակողմանի ծանոթությունը Նեկրասովի պոեզիային և այդ պոեզիայի որոշակի ազդեցու-

¹ Հ. Հակոբյան, Երկեր, 1931, էջ 231:

² Հայկական ՍՍՄ Գրականության և արվեստի ինստիտուտ, Հ. Հակոբյանի ֆոնդ:

թյունը, Հակոբ Հակոբյանի մոտ ուժեղացնում են ատելությունն ու պայքարը բուրժուական ուսմանտիղմի, ազգային սնապարծության ու սահմանափակության դեմ: Նեկրասովի ստեղծագործություններում Հակոբյանը տեսնում է հայրենասիրության, ժողովրդի վշտի ու տառապանքի միանդամայն նոր, ավելի հարադատ, բաղմունկ ու ճիշտ պատկերում, քան 80-ական թվականներին հայտնի այլ բանաստեղծների երկերում: Այդ տեսակետից խիստ բնորոշ են նրա հետևյալ տողերը. «Տհաճությունը Գամառ Բաթիպայի դեմ զարգացավ իմ մեջ այն ժամանակ, երբ ես սկսեցի ծանոթանալ Նեկրասովի և ուս գրողների ստեղծագործություններին, որովհետև այնտեղ գտնում էի ժողովրդական վշտերի արտահայտության ավելի հարադատ ու անպարփակ տարրեր»¹:

Վաղ շրջանի իր «Հիշատակարան»-ում Հակոբյանն արտագրել է Նեկրասովի այն բանաստեղծությունները, որոնք առանձնապես մոտ ու սիրելի էին նրա սրտին: Սի առանձին սեր ունենալով դեպի ուսական երգերը, Հակոբյանն այդ երգերի լավագույն նմուշները գրի է առել իր «Հիշատակարաններ»-ում, գրել է իր տպավորությունները դրանց մասին: Այսպես, օրինակ, 1890 թվականի հունիսի 29-ին, Հակոբյանն իր «Հիշատակարան»-ում արտագրում է Նեկրասովի «Коробейничка» պոեմի առաջին 24 տողը. ինչպես հայտնի է 70—80-ական թվականներին Նեկրասովի պոեմի այդ հատվածը ղետեղված էր ուսական երգարաններում և սիրված ու տարածված ուսական երգերից մեկն էր այդ ժամանակաշրջանում: Հակոբյանի «Հիշատակարան»-ում կարդում ենք. «Ահա և երկրորդ երգը Նեկրասովի, որի կրակոտ, այրող եղանակի և խոսքերի ազդեցության տակից երկար ժամանակ չէի կարողանում փրկվել.

Ой, плена, полна коробушка,
Есть и ситцы и парча-
Пожалеи, моя зазнобушка,
Молодецкого плеча!

Выди, выди в рожь высокую,
Там до почки погожу,
А завижу черноокую —
Все товары разложу.

Цены сам платил немалые,
Не торгуйся, не скупись:
Подставляй-ка губы алые,
Ближе к милому, садись!

Вот и палл ночь туманная,
Ждет удалий молодец.
Чу идет! — пришла желанная,
Продает товар купец.

Катя бережно торгуется,
Все бонтя передать.
Парень с девичей целуется,
Просит цену набавлять.

¹ Հ. Հակոբյան, Ծրվեր, 1951, էջ 365,
Տեղեկագիր 8—5

Знает только ночь глубокая,
Как поладили они.
Распрямись ты, рожь высокая,
Тайну свято сохрани!

Ահա այդ սիրտ փշրող, վշտացնող ու թախծալի տողերը, որոնց ես երգում էի մենակ, բնության լռության մեջ¹:

Պատանի Հակոբյանի տեսողաշտից չեն վրիպել նույնիսկ առանձին ու եզակի այն թարգմանությունները, որ 80-ական թվականներին կատարվել են նեկրասովից: Իր «Հիշատակարան»-ում 1885 թվականի հոկտեմբերի 23-ին նա գրում է. «Եվ ահա ես տեսա նեկրասովի «Внимая ужасам войны»-ի թարգմանությունը հայերեն. ես կարգացի ու նմանություն գտա: Ես մտածում էի, բայց ես երբ պիտի մի թարգմանություն գեթ անեմ»²:

Անսահման սերը դեպի 60-ական թվականների ռևոլյուցիոն-դեմոկրատները, հատկապես դեպի Նալբանդյանն ու նեկրասովը, մեծ նշանակություն ունեցան Հակոբյանի ստեղծագործությունների համար: Հայ աշխատավոր մասսաների ճնշման ու շահագործման, վշտի ու տառապանքի աշխարհը դարձնելով իր ստեղծագործության բուն օբյեկտը, Հակոբյանը նեկրասովի հետևություններ, հասարակական նոր իրադարձությունների պայմաններում, վճռականորեն կարող էր հայտարարել.

Եվ որքան դյուրող լինի ձեր հմայք,
Երկինք ու աստղեր,
Կա՛ մի քրտնալի, կարիքի աշխարհ—
Ճնշված ու լքված՝
Նրան եմ ընտրում,
Այնտեղ վիշտ, զրկանք իրար հետ գրկված՝
Մի ելք են փնտրում...

Հակոբյանը նեկրասովի դեմոկրատական-ռևոլյուցիոն պոեզիայի իսկական շարունակողն էր հայ գրականության մեջ: Նրան առաջինը վիճակվեց, աշխատավոր լայն մասսաների վշտի ու տառապանքի երգերից բացի, ստեղծել այդ մասսաների պայքարի, հաղթանակի ու մեծ ազատության ռևոլյուցիոն հերոսական երգերը:

Հայ դեմոկրատական պոեզիան որոշակիորեն զարգացել է նեկրասովի ազդեցությամբ: Հայ իրականության մեջ տարբեր պոետներ տարբեր ձևով են ընկալել նեկրասովի պոեզիան, տարբեր է եղել և նրանց կրած ազդեցության և ոգեշնչման աստիճանը, բայց այդ ազդեցությունը եղել է և մենք պարտավոր ենք նշել այն, որպես ռուս ժողովրդի մեծ պոետի ծառայությունը հայ պոեզիային:

Հայ առաջավոր, դեմոկրատական պոեզիայի լավագույն ներկայացուցիչների համար խիստ հարազատ են հնչել նեկրասովի պոետական հուժկու ձայնը, վշտի մորմոքները, պայքարի և ազատության ուժեղ ու զորեղ երգերը:

¹ Գրականության և արվեստի թանգարան, հ. Հակոբյանի ֆոնդ:

² Նույն տեղում: